Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացած՝ 11-ը հուլիսի 2019 թվական **քաղաք Գյումրի**

2019 թվականի հուլիսի 11-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

Մասնակցում էին ՀՀ Շիրակի մարզի 42 համայնքների ղեկավարներից 41-ը, Մեղրաշեն համայնքի ղեկավարը բացակայում էր հարգելի պատճառով:

Մարզի խորհրդի նիստը վարում էր՝ ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը:

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

- մարզպետի տեղակալը, խորհրդականները, օգնականները,
- մարզպետարանի վարչությունների և բաժինների պետերը,
- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ:

Մարզպետը ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագիծը՝

1. **Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2019 թվականի վեց ամիսների կատարման մասին**

   Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյան

2. **Ոռոգման աշխատանքների ընթացքը Շիրակի մարզում**

   Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մովսես Մանուկյան

3. **Շիրակի մարզում 2019 թվականին իրականացվող ճանապարհաշինության ընթացքի մասին**

   Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյան

4. **Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքի մասին**

   Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Վահան Մարտիրոսյան

5. **Մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հողօգտագործման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին**

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Զորիկ Խաչատրյան

6. **Հայտարարություններ**

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեղան, օրակարգը հաստատվեց:

Այնուհետև անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ 1. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2019 թվականի վեց ամիսների կատարման մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյան

(Զեկուցագիրը կցվում է)

Անդրադառնալով համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման վեց ամիսների ցուցանիշներին, մարզպետը կարևորեց եկամուտների հավաքագրման ցուցանիշների դրական տեղաշարժը, հատկապես գույքահարկի և տեղական տուրքերի հավաքագրման բարձր մակարդակը, ինչը նշանակում է, որ համակարգը բավականին ճիշտ է արձագանքում ստեղծված իրավիճակին: Նա միաժամանակ մտահոգիչ համարեց գույքի վարձավճարի և հողի հարկի հավաքագրման ցածր ցուցանիշների առկայությունը:

Թվարկելով բարձր կատարողական ունեցող համայնքները, դրական գնահատեց կատարված աշխատանքները, այնուհետ հանձնարարեց մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետին (Ա. Անտոնյան) և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Լ. Մարտիրոսյան)՝ ամենամսյա ռեժիմով կազմակերպել հանդիպումների շարք, սեփական եկամուտների ցածր կատարողականներ ունեցող համայնքների ղեկավարների հետ և առաջարկեց վերջիններիս՝ լինել հետևողական ու շարունակական աշխատանք տանել սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների բարելավման ուղղությամբ: Նա հավելեց, որ ցածր ցուցանիշները բացասաբար են անդրադառնում համայնքների զարգացման վրա, քանի որ սեփական եկամուտների հավաքագրման արդյունքում միայն համայնքը կկարողանա մասնակցել սուբվենցիոն կամ այլ ծրագրերի իրականացմանը:

ԼՍԵՑԻՆ 2. Ոռոգման աշխատանքների ընթացքը Շիրակի մարզում

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

(Զեկուցագիրը կցվում է)

Այնուհետև անդրադարձ կատարվեց մարզի գյուղերում կարկտահարության պառճառով հասցված վնասներին, համայնքների ղեկավարների կողմից նշվեց, որ կարկտահարվել են նաև այն գյուղերը, որոնք ունեն հակակարկտային կայաններ:

Գետք և Բայանդուր համայնքների ղեկավարները տեղեկացրեցին, որ երբեմն կարկտահարության պատճառը ոչ թե հակակարկտային կայանների անարդյունավետությունն է, այլ դրանց փաստացի փորձաքննության չենթարկվելը: Հակակարկտային կայանների փորձաքննության համար համայնքապետարանները չնայած վճարում են, սակայն փորձաքննության անցկացում, որպես այդպիսին փաստացի չի կատարվում, իսկ փորձաքննություն չանցած հակակարկտային կայանների գործարկումն առաջացնում է վարչական պատասխանատվություն:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետը տեղեկացրեց, որ համայնքների ղեկավարների կողմից բարձրացված հարցի վերաբերյալ նախորդ տարիներին համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, սակայն խնդրին վերջնական լուծում դեռևս չի տրված:

Մարզպետը հանձնարարեց գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետին (Մ. Մանուկյան), այն համայնքներում որտեղ առկա են հակակարկտային կայանների փորձաքննության գործընթացի հետ կապված մտահոգություններ, ևս մեկ անգամ միասնական քննարկում անցկացնել, պարզաբանել հարցի ամբողջական պատկերը և արդյունքները ներկայացնել Շիրակի մարզպետին՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ խնդրի վերջնական լուծման համար մոտեցումները պարզաբանելու նպատակով:

Փանիկ համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ Արթիկի տարածաշրջանի համայնքների ղեկավարների համար մտահոգիչ է գյուղերում ոռոգման ջրի հարցը, որն անմիջական կապ ունի բերքի ստացման և հարկ վճարելու հետ:

Մարզպետն ավելացրեց, որ ներկայումս առաջնահերթ է ջրի ծավալների զգալի կորուստները նվազագույնին հասցնելու խնդիրը:

Ազատան համայնքի ղեկավարը հարց բարձրացրեց աշնանացան ցորենի սերմացուի ծրագրի վերաբերյալ, որին ի պատասխան մարզպետը տեղեկացրեց, որ այժմ ընթանում են կարկտահարության հասցրած վնասների ամփոփման աշխատանքները, դրանք առաջիկայում կավարտվեն և կուղարկվեն ՀՀ կառավարություն, որպեսզի կարկտահարության հետևանքով հասցված վնասի փոխհատուցման շրջանակներում համայնքներին տրամադրվի նաև աշնանացան ցորենի սերմացու:

Մարզպետը նաև տեղեկացրեց, որ հանրապետությունում սկսել է գործել գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմը, որը կապահովագրի այն ռիսկերը, որոնք առկա են բնական ու տարերային աղետների առաջացման դեպքում:

ԼՍԵՑԻՆ 3. Շիրակի մարզում 2019 թվականին իրականացվող ճանապարհաշինության ընթացքի մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ՝ Ալբերտ Մարգարյան

(Զեկուցագիրը կցվում է)

Մարզպետն առանձնահատուկ կարևորեց մարզում որակյալ ճանապարհաշինական աշխատանքների իրականացումը և միաժամանակ նշեց, որ մարզում վերահսկողության լուրջ խնդիր կա, որպեսզի շինարարն իր աշխատանքին սրտացավորեն մոտենա և թերացումները բացառվեն: Որակի վերահսկողությունը պետք է առաջնային լինի, մարզում անորակ ճանապարհաշինություն չպետք է իրականացվի:

Բազմաթիվ բողոքներ են ստացվում քաղաքացիներից, այս կամ այն ճանապարհի շինարարության որակի վերաբերյալ: Չնայած համայնքների ղեկավարների պարտավորությունների տիրույթում չեն մարզային և հանրապետական նշանակության ճանապարհների որակի վերահսկողությունը, սակայն մարզպետը հորդորեց վերջիններիս հետևողական լինել և ի հայտ եկած թերությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել մարզպետարան, քանի որ ճանապարհները սպասարկում են ազգաբնակչությանը, այդ իսկ պատճառով համայնքապետարանները պետք է լինեն թիվ մեկ գործընկերը ճանապարհաշինական աշխատանքների թերությունների արձանագրման գործում:

Պետական բյուջեի սուղ միջոցներով իրականացվում են ճանապարհաշինական աշխատանքներ և այդ աշխատանքների որակյալ կատարման նկատմամբ վերահսկողությունը և թերությունների ժամանակին արձանագրումը հնարավորություն կտա մարզպետարանին կարծիք ներկայացնելու՝ ոչ որակյալ աշխատանքներ իրականացնող շինարարական կազմակերպությունների վերաբերյալ:

Մարզպետը նշեց, որ ներկայումս մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի միջոցով տեխնիկայի ձեռք բերումը մեծ օգուտ կարող է բերել համայնքներին՝ հատկապես անանցանելի ճանապարհների հարթեցման գործում: Եթե համայնքի բյուջեի հնարավորությունները բավարար չեն ասֆալտապատում իրականացնելու համար, ապա դա չի նշանակում, որ ճանապարհները պետք է անանցանելի մնան:

Ախուրյան համայնքի ղեկավարը հարց բարձրացրեց միավորված համայնքների միջբնակավայրային ճանապարհների վերաբերյալ, նշելով, որ դրանց սպասարկումը համայնքների համար դժվարություններ են ստեղծում:

Հարցին ի պատասխան մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետը տեղեկացրեց, որ նախագիծ է մշակվում միջբնակավայրային ճանապարհների սպասարկումը համայնքներին պատվիրակելու համար, որի արդյունքում հաշվի կառնվեն առաջ քաշված խնդիրները:

Ի պատասխան Անուշավան համայնքի ղեկավարի հարցադրմանը՝ Անուշավան-Արթիկ միջհամայնքային անանցանելի ճանապարհի վերաբերյալ, մարզպետը տեղեկացրեց, որ թվով 10 հրատապ ճանապարհաշինության ծրագրային փաթեթներ՝ այդ թվում նշված ճանապարհինը, ներկայացրվել են ՀՀ կառավարություն: Գործադիրի քննարկման արդյունքներով պարզ կդառնա, թե քանի ծրագիր Շիրակի մարզում կֆինանսավորվի:

Անի համայնքի ղեկավարը հարց բարձրացրեց Շիրակի և Արագածոտնի մարզերի սահմանները միացնող (Ձիթհանքով - Զարնջա) ճանապարհի ոչ բարվոք լինելու վերաբերյալ, որը ունի ստրատեգիական նշանակություն և ապահովում է Երևան-Գյումրի, Արմավիր-Գյումրի կապը: Ճանապարհի մի հատվածը Արագածոտնի մարզին է պատկանում, մնացած մասը՝ Շիրակի մարզին, առաջարկեց փոխադարձ համաձայնություն ձեռք բերել և ճանապարհի վերանորոգում իրականացնել, Անի համայնքը ևս պատրաստակամ է իր մասնակցությունն ունենալու:

Հայրենյաց համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ ճանապարհների նորգման ժամանակ հիմնականում ոչ ճիշտ ծածկույթի վրա է կատարվում ասֆալտապատումը, որը հարմար չէ այդ տեսակի ճանապարհներին և շատ շուտ շարքից դուրս է գալիս:

Մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետն առաջարկեց գրավոր ներկայացնել ճանապարհաշինության հետ կապված բոլոր խնդիրները՝ դրանց ընթացք տալու համար:

Վերջինս նշեց նաև, որ համայնքներում ժամանակավոր կացարանների առկայության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու հարցում համայնքները թերացել են, երբեմն նույնիսկ տրամադրել են ոչ ճշգրիտ տեղեկատվություն: Այնուհետ հորդորեց համայնքների ղեկավարներին բոլոր տեսակի գրություններին պատասխանել պատշաճ, սահմանված ժամկետներում, հետագա բարդություններից խուսափելու համար լինել առավել պարտաճանաչ:

Այնուհետև մարզպետն ավելացրեց, որ ոչ միայն գրություններին պատասխանելու, այլև մարդկանց ճակատագրերի հետ կապված խնդիրներ կան, անփույթ աշխատանքի հետևանքով տնակում բնակվող ընտանիքի հարցը չի լուծվում: Ժամանակավոր կացարանների հաշվառման և քարտեզագրման գործընթացը ավարտին է մոտենում և սխալ տեղեկատվություն տրամադրելու դեպքում իրավական պատասխանատվությունը ուղղակիորեն մնում է համայնքների ղեկավարների վրա:

ԼՍԵՑԻՆ 4. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքի մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահան Մարտիրոսյան

(Զեկուցագիրը կցվում է)

Մարզպետի հարցադրմանը ի պատասխան Վահան Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ ներկայումս քննարկվում է 15 սուբվենցիոն ծրագիր և դեռևս որևէ ծրագիր չի մերժվել:

ԼՍԵՑԻՆ 5. Մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հողօգտագործման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Զորիկ Խաչատրյան

(Զեկուցագիրը կցվում է)

Մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետը, հողամասերի աճուրդների և մրցույթների հայտարարման և անցկացման գործընթացների հանրային հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով, առաջարկեց համայնքների ղեկավարներին լինել հետևողական, մրցույթների և աճուրդների հայտարարությունները պարտադիր հրապարակել ՀՀ պաշտոնական օրաթերթում, ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am, համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերում, փակցնել համայնքապետարանների տեղեկատվական ցուցատախտակներին:

Անուշավան համայնքի ղեկավարը հարց բարձրացրեց համայնքների կադաստրային քարտեզների անճշտությունների վերաբերյալ, որին ի պատասխան մարզպետը տեղեկացրեց, որ շատ համայնքներում կան կադաստրային քարտեզների անճշտություններ և ներկայումս ՀՀ կառավարության, քաղաքաշինական պետական կոմիտեի և կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվում են էլեկտրոնային քարտեզագրման աշխատանքներ, աշխատում են անցնելու նոր համակարգի, որպեսզի այդ անճշտություններն իջնեն սանտիմետրերի մակարդակի:

Մարզպետը նաև տեղեկացրեց, որ ներկայումս ներդրողների մոտ մեծ հետաքրքրություն կա համայնքներում գյուղատնտեսական նպատակների օգտագործման հարմար ոչ նպատակահարմար հողատարածքների նկատմամբ, առավելապես 2000 մ-ից բարձր գտնվող հողատարածքների՝ հարավային հատվածներում արևային կայաններ տեղադրելու համար, որը համայնքի համար լրացուցիչ եկամուտ և բյուջեն համալրելու միջոց կարող է հանդիսանալ:

Նա շեշտեց, որ անհրաժեշտ է զբոսաշրջության համար նպաստավոր պայմաններ ստեղծել և ավելի ճկուն լինել, քանի որ ներկայումս օտարերկրացիների կողմից մեծ պահանջարկ կա հանգստի գոտիների նկատմամբ: Շատ կարևոր է ժամանակակից մոտեցումներ ցուցաբերել և ներկա ժամանակներին համահունչ առաջ ընթանալ, որը կնպաստի համայնքների զարգացմանը:

Հայտարարության համար մարզպետը ձայն տվեց Շիրակի երկրագիտական թանգարանի գիտաշխատող Հ.Խաչատրյանին:

Վերջինս տեղեկացրեց, որ ՀՀ Շիրակի մարզում առկա են պետության կողմից պահպանվող շուրջ 2400 հնագիտական հուշարձաններ, որոնց մի մասը գտնվում են հողի տակ կամ մասամբ բացված տարածքներում: Նա հայտնեց իր մտահոգությունը մարզի տարբեր համայնքներում պատմամշակութային հուշարձանների և նոր հայտնաբերվող հնագիտական վայրերի հետ կապված խնդիրների վերաբերյալ, քանի որ համայնքներում տարբեր ծրագրերով իրականացվող հողային աշխատանքների՝ օրինակ ջրագծի կառուցման կամ գազատարի անցկացման ընթացքում ավերվում են ի հայտ եկած հնագիտական նշանակություն ունեցող գտածոներ (օրինակ՝ Վարդաքար, Իսահակյան համայնքներում հայտնաբերված դամբարանները):

Նաև նշեց, որ տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն պարտավորություններ իրենց վարչական տարածքներում գտնվող պատմական հուշարձանների, հնագիտական վայրերի պահպանության հարցում և հորդորեց համայնքների ղեկավարներին համագործակցել և համայնքներում ցանկացած տեսակի աշխատանքներ իրականացնելու ընթացքում հայտնաբերված գտածոների վերաբերյալ անհապաղ տեղեկացնել երկրագիտական թանգարանին՝ կատարվող աշխատանքների ընթացքին համապատասխան մասնագետների ներկայությունն ապահովելու համար:

Մարզի խորհրդի նիստն ամփոփեց ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը.

Մարզպետը տեղեկացրեց, որ նախորդ մարզի խորհրդի նիստից հետո մարզում կայացել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, որոնց արդյունքներով համայնքների ղեկավարներ են վերընտրվել՝ Սպանդարյան համայնքում Ավետիք Մխիթարյանը և Անուշավան համայնքում Երվանդ Հակոբյանը, իսկ Փանիկ և Հայկավան համայնքներում կազմավորվել են համայնքների ավագանիներ, որի կապակցությամբ շնորհավորեց վերջիններիս:

Այնուհետև մարզպետը համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց աշխատանքային ու կատարողական կարգապահության վրա, մտահոգություն հայտնեց մարզի առանձին համայնքապետարաններում աշխատանքային ռեժիմի խախտումների առնչությամբ, անընդունելի համարեց նման աշխատելաոճը և միաժամանակ նշեց, որ խոշորացված համայնքներում այս խնդիրը կարգավորված է, սակայն փոքր համայնքներում աշխատանքային ժամերին համայնքապետարանների դռների փակ լինելու դեպքերը հաճախակի են արձանագրվել: Առաջարկեց համայնքների ղեկավարներին հետևողական լինել և բնակիչների դժգոհությունների առիթ չտալ: Այս կապակցությամբ հանձնարարեց նաև մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետին (Ա. Անտոնյան)՝ հսկողության տակ պահել այս խնդիրը և մարզի համայնքապետարաններում աշխատանքային ժամերի պահպանման նկատմամբ լինել առավել հետևողական:

Ամփոփելով խոսքը մարզպետը հորդորեց համայնքների ղեկավարներին մարզում իրականացվող բոլոր տեսակի ծրագրերի և աշխատանքների արդյունքում առաջ եկած խնդիրներին ժամանակին արձագանքել, քանի որ բոլորն ունեն իրենց

պատասխանատվության և պարտավորության աստիճանը: Մարզում հարցերի լուծմանը շատ պատասխանատու մոտենալ, ցուցաբերել սրտացավություն:

Նա հավելեց, որ բոլոր աշխատանքներում որակը այլևս առաջնահերթություն է: Առաջարկեց աշխատել մարզպետարանի հետ ամենօրյա ռեժիմով, համընդհանուր խնդիրները լուծելու համար համայնքների և պետության սուղ միջոցները օգտագործել առավելագույնս նպատակային և շարունակական որակյալ ծառայություններ մատուցել ազգաբնակչությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Տաթևիկ Առաքելյանը

Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2019 թվականի վեց ամիսների կատարման մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյան

2019թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել են 85.7%-ով (տարեկան պլանի նկատմամբ 39.2%), նախատեսված 1,221,525.5 հազ. դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 1,046,713.5 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 174,812.0 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2019թ. բյուջեների վեց ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2019թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	158,610.5	121,393.1	- 37,217.4	76.5
Գույքահարկ	460,381.3	377,270.1	- 83,111.1	81.9
Պետական տուրք	21,730.0	29,302.6	7,572.6	134.8
Տեղական տուրք	66,268.4	63,921.2	2,347.2	96.5
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	174,104.7	126,649.8	- 47,454.9	72.7
ա/ հողի վարձավճար	147,216.8	103,352.5	- 43,864.3	70.2
բ/ գույքի վարձավճար	26,887.9	23,297.2	- 3,590.7	86.6
Այլ եկամուտներ	340,430.7	328,176.7	- 12,254.0	96.4
Ընդամենը սեփական եկամուտներ	1,221,525.5	1,046,713.5	- 174,812.0	85.7

2019թ. վեց ամիսների փաստացի հավաքագրվածի աճի տոկոսը 2018թ. համեմատությամբ կազմում է 11.5% կամ ավել է հավաքագրվել 107,923.9 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

h/h	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2019թ. 6 ամիսների նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1.	**Ախուրյան այդ թվում՝**	**197,268.3**	**141,702.3**	**- 55,566.0**	**71.8**
1.1	Ախուրյան	80,411.5	59,128.0	- 21,283.5	73.5
1.2	Մարմաշեն	48,184.0	32,824.6	- 15,359.4	68.1
2.	**Աշոցք այդ թվում՝**	**51,662.0**	**39,035.3**	**- 12,626.8**	**75.6**
2.1	Աշոցք	32,010.1	26,779.5	- 5,230.6	83.7
2.2	Սարապատ	19,651.9	12,255.8	-7,396.1	62.4
3.	**Անի**	**74,657.3**	**60,814.7**	**- 13,842.6**	**81.5**
4.	**Արթիկ**	**169,354.7**	**144,425.5**	**- 24,929.2**	**85.3**
5.	**Ամասիա այդ թվում՝**	**44,047.2**	**38,264.6**	**- 5,782.7**	**86.9**
5.1	Ամասիա	20,511.7	20,669.1	157.3	100.8
5.2	Արփի	23,535.5	17,595.5	- 5,940.0	74.8

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2019թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ախուրյանի տարածաշրջանում՝ 71.8%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 69.1% կամ աճի տոկոսը կազմում է 2.7, գումարային աճը կազմել է 10,426.2 հազ. դրամ:

Մարզի քաղաքային համայնքները 2019թ. սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 90.9%, **Արթիկ** քաղաքը՝ 92.4%:

Մարզի թվով 26 համայնքներ չեն ապահովել 2019թ. վեց ամիսներին արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 85.7%-ը, այդ թվում՝ թվով 3 համայնքներ չեն ապահովել սեփական եկամուտների կատարման նույնիսկ 50.0 %-ի ցուցանիշը:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

ՀՀ պետական բյուջեով 2019 թվականին վեց ամիսներին նախատեսված 2,413,250.5 հազ. դրամ «Դոտացիան» ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

Ոռոգման աշխատանքների ընթացքը ՀՀ Շիրակի մարզում

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

2019թ. մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Աճ կամ նվազում /+/-/ /հա/
		2018թ.	2019թ.	
	Աշնանացան ցորեն	18458	15865	**-2593**
	Գարնանացան գարի	14587	15277	**+690**
	Կարտոֆիլ	3220	3174	**-46**
	Բանջարեղեն	1450	1374	**-76**
	Կերային մշակաբույսեր	11686	10901	**-785**
	Տեխնիկական մշակաբույսեր	105	72	**-33**
Ընդամենը		**49506**	**45289**	**-4217**

2019թ. «Շիրակ» ՋՕԸ-ի և մարզի ջրօգտագործողների միջև կնքվել է պայմանագիր 2100 հա-ի հողատարածք ոռոգելու նպատակով: 2019 թվականի ոռոգման սեզոնի սկիզբը արձանագրվեց մայիսի 26-ից, իսկ նախորդ տարի հունիսի 25-ին, ինչը պայմանավորված էր սեզոնի ընթացքում մարզի տարածաշրջաններում տեղումների քանակի միջին տարեկան ցածր ցուցանիշով:

Ինչպես մեր, այնպես էլ «Շիրակ» ՋՕԸ-ի ամենօրյա հսկողության ներքո արվում է մաքսիմումը ջրի տրման ռեժիմը պահելու համար: Ներկա պահին ոռոգման աշխատանքները ընթանում են առանց ընդհատումների, խնդիրներ առաջանալու դեպքում օպերատիվ կերպով տրվում է լուծումներ:

2019թ. «Շիրակ» ՋՕԸ-ի կողմից իրականացվել է մաքրման և վերանորոգման հետևյալ աշխատանքները.

		կմ	հազ. մ^3
Ոռոգման ցանցի մաքրում		387.12	5511.76
այդ թվում՝	**ձեռքով**	69.25	6.57
	մեխանիզմով	317.87	5505.19
Ոռոգման ցանցի նորոգում		1.24	
Պոմպակայանների նորոգում		1	
ՀՏԿ-ների նորոգում		35	

Հարկ ենք համարում նշել, որ վերջին տաս տարիների ընթացքում առաջին անգամ մաքրման աշխատանքներ իրականացվեցին 26-րդ բաժանարարից մինչև Ազատան համայնք՝ 6 կմ երկարությամբ, որը հնարավորություն տվեց լրացուցիչ ջրային ծավալներ ապահովել համայնքի վարելահողերի ոռոգման համար:

Ջրամբարների լցվածությունը 11.07.2019թ. դրությամբ՝

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ^3/	Լցվածությունը առ 11.07.2018թ. /մլն մ^3/	Լցվածությունը առ 11.07.2019թ. /մլն մ^3/	Աճ/նվազում +/- /մլն մ^3/
1	**Ախուրյան**	525.0	423.87	396.14	**-27.73**
2	**Արփի լիճ**	105.0	45.70	85.10	**+39.40**
3	**Կառնուտ**	22.60	15.08	9.76	**-5.32**
4	**Սառնաղբյուր**	4.80	0.67	0.88	**+0.21**
5	**Վարդաքար**	5.0	1.48	1.18	**-0.30**
6	**Թավշուտ**	6.0	4.03	3.21	**-0.82**
7	**Մանթաշ**	8.20	5.70	6.64	**+0.94**
8	**Ջաջուռ**	0.28	0.22	0.21	**-0.01**
Ընդամենը		**151.88**	**72.88**	**106.98**	**+34.10**

Ջրամբարների լցվածության հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Շիրակի մարզում 2019 թվականին իրականացվող ճանապարհաշինության ընթացքի մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյան

Մարզն ունի շուրջ 828.0 կմ երկարությամբ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ, որից միջպետական նշանակության՝ 114.2 կմ, հանրապետական նշանակության՝ 212.7 կմ և մարզային (տեղական) նշանակության՝ 501.1 կմ:

2019 թվականին մարզում ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը կկազմի շուրջ **11.23 միլիարդ ՀՀ դրամ**:

1. Ավտոմոբիլային ճանապարհների սպասարկում

2019 թվականին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր օգտագործման պետական միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների կազմակերպման համար ՀՀ տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարությանը հատկացվել էր շուրջ 615.0 մլն. դրամ գումար: Հատկացված 615.0 մլն դրամ գումարով կիրականացվեն 309.9 կմ երկարությամբ ձմեռային պահպանման և 282.9 կմ երկարությամբ ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքներ: Իսկ մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների կազմակերպման համար ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացվել էր 183.965 մլն. դրամ գումար:

Հատկացված 183.965 մլն դրամ գումարով կիրականացվեն 254.0 կմ երկարությամբ ձմեռային պահպանման և 85.0 կմ երկարությամբ ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքներ:

2. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին հիմնանորոգվող ճանապարհներ

- Տ-7-70 Հոռոմ Հովտաշեն տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի 0.67 կմ երկարությամբ ճանապարհահատվածը՝ 38.2 մլն. դրամ գումարով: Աշխատանքներն ընթացքի մեջ են:
- Տ-7-45 Կրաշեն-Մ7 տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի 0.184 կմ երկարությամբ ճանապարհահատվածը՝ 10.932 մլն. դրամ գումարով: Աշխատանքներն ընթացքի մեջ են:
- Իրականացվելու է նաև Մ-1՝ «Երևան-Աշտարակ-Գյումրի-Վրաստանի սահման» կմ148+300-կմ152+400 ճանապարհահատվածի (250.0 մլն. դրամ), Մ-7՝ «Մ-3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման» կմ27+000-կմ30+500 և կմ31+700-կմ33+300 ճանապարհահատվածների (664.0 մլն. դրամ), Հ-75, «Մ9-Իսահակյան-Գյումրի-Մ7» ավտոճանապարհի առանձին հատվածների անցանելիության ապահովման (5.0 մլն. դրամ) և Հ-32, «Մ-1-Գյումրի-Կապս-Ամասիա-Մ-1» կմ12+000-կմ17+700 ճանապարհահատվածի (196.0 մլն. դրամ) վերականգնման աշխատանքները:

•Համաշխարհային բանկի «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի» շրջանակներում կհիմնանորոգվի և մինչև տարեվերջ շահագործման կհանձնվի Տ-7-25՝ Մ1-Հայրենյաց-Տուֆաշեն-Հ83 11.1 կմ երկարությամբ մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհը՝ շուրջ 800.0 մլն. դրամ գումարով: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

•2019 թվականին շարունակվում է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ 3-ի Լանջիկ-Գյումրի 27,5 կմ երկարությամբ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները: Կապալառու՝ «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ (Չինաստան): Պայմանագիրը կնքվել է 08.12.2015թ. 74,066 մլն. եվրո ընդհանուր արժողությամբ:

•Մարզի համայնքներից (Գյումրի, Ազատան, Նոր Կյանք, Լուսակերտ, Անի, Պեմզաշեն, Փանիկ, Գետք, Մեծ Մանթաշ և Հոռոմ) ճանապարհաշինության ոլորտում ներկայացված սուբվենցիաների ծրագրերից ՀՀ կառավարության կողմից հաստատվել են թվով 10-ը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 743.9 մլն. դրամ, որից 409.05 մլն. դրամ գումարը կհատկացվի ՀՀ պետական բյուջեից, իսկ 334.85 մլն. դրամ գումարը՝ համայնքային բյուջեներից: Աշխատանքներ իրականացվում են միայն Գետք և Նոր կյանք համայնքներում:

Գյումրի քաղաքում իրականացվող ճանապարհաշինական աշխատանքների վերաբերյալ

Քաղաքն ունի 225 փողոցներ (փողոցներ, նրբանցքներ, փակուղի, անցումներ, շարքեր) շուրջ 181.0 կմ երկարությամբ, որից 102.0 կմ ունեն ասֆալտբետոնյա ծածկույթ:

1. 2019 թվականին շարունակվում են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի ֆինանսավորմամբ «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրով Գյումրի քաղաքի թվով 12 փողոցների կամ փողոցների հատվածների՝ շուրջ 11.2 կմ երկարությամբ և թվով 2 հրապարակների վերակառուցման աշխատանքները: Պայմանագրերը կնքվել են 2018 թ. 7.5 մլն. եվրո ընդհանուր արժողությամբ: Իրականացվում են նաև թվով 33 փողոցների կամ փողոցների հատվածների՝ շուրջ 24.0 կմ երկարությամբ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

2. 2019 թվականին շարունակվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող թվով 5 փողոցների կամ փողոցների հատվածների՝ շուրջ 1.8 կմ երկարությամբ և 2 հրապարակների հիմնանորոգման աշխատանքները: Պայմանագրերը կնքվել են 2018թ. 995 մլն. դրամ ընդհանուր արժողությամբ:

3. ՀՀ Շիրակի մարզի համայնքների կողմից ներկայացված 2019 թվականի սուբվենցիայի ծրագրային հայտով հաստատվել է Գյումրի քաղաքի թվով 5 փողոցների կամ փողոցների հատվածների հիմնանորոգման աշխատաքները՝ 5.0 կմ երկարությամբ, շուրջ 515.5 մլն դրամ գումարով, որից 283.5 մլն. դրամը ՀՀ պետական բյուջեից:

4. Գյումրի քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման՝ երթևեկելի մասերի փոսային նորոգման աշխատանքների համար 2019 թվականի համայնքային բյուջեից հատկացվել է 141.0 մլն. դրամ գումար: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքի մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահան Մարտիրոսյան

Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականի պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու համար ՀՀ Շիրակի մարզի **25** համայնքների հետ համատեղ կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել **49** ծրագրային հայտ, որոնք ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված սուբվենցիայի ծրագրերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության են արժանացել:

Հավանության արժանացած **49** սուբվենցիայի ծրագրերի ամբողջական արժեքը կազմում է **2,310.45 մլն. դրամ**, որից ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիայի չափը կազմում է **1,222.05 մլն դրամ**, իսկ համայնքների կողմից կատարված համաֆինանսավորման չափը կազմում է **1,088.4 մլն.դրամ**:

49 սուբվենցիայի ծրագրային հայտերը ներառում հետևյալ ոլորտները՝

- Բնակավայրի փողոցների կառուցում, նորոգում և ասֆալտապատում՝ **10 ծրագրային հայտ (10 համայնքում)**: Արդյունքում կունենանք **16.6 կմ** երկարությամբ նորոգված, խճապատված և ասֆալտապատված ճանապարհ:

- Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում, նորոգում՝ **2 ծրագրային հայտ (2 համայնքում)**: Արդյունքում կունենանք՝ վերակառուցված **1.65կմ** երկարությամբ խմելու ջրի ջրամատակարարման համակարգ **և 0,5կմ** երկարությամբ ջրահեռացման համակարգ:

- Ոռոգման համակարգի կառուցում, նորոգում՝ **3 ծրագրային հայտ (3 համայնքում)**: **Արդյունքում ոռոգելի հողատարածքները կավելանան 134 հա-ով:**

- Փողոցային լուսավորության համակարգի կառուցում, նորոգում՝ **5 ծրագրային հայտ (5 համայնքում)**: **Արդյունքում կփոխարինվի կամ կտեղադրվի 1004 նոր լուսակիրներ:**

- Վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ **7 ծրագրային հայտ (7 համայնքում): Արդյունքում կունենանք 1.16 Մգվտ ընդհանուր հզորությամբ արևային ֆոտովոլտային կայաններ**:

- Մանկապարտեզների կառուցում, վերակառուցում և նորոգում՝ **5 ծրագրային հայտ (2 համայնքում): Վերակառուցվող մանկապարտեզներում հաճախելու հնարավորություն կունենան շուրջ 400 երեխաներ:**

- Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում, վերանորոգում՝ **7 ծրագրային հայտ (6 համայնքում): Արդյունքում կունենանք պատմության թանգարան Գյումրի քաղաքում, վերակառուցված մշակույթի տներ, համայնքային կենտրոններ և համայնքային ֆուտբոլի դաշտ:**

- Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ **1 ծրագրային հայտ (1 համայնքում): Ծրագրերի իրականացման արդյունքում կունենանք 1126.6 քառ.մ մակերեսով 2 բազմաբնակարան շենքի վերանորոգված տանիքներ:**

- Մեքենասարքավորումների ձեռքբերում՝ **9 ծրագրային հայտ (8 համայնքում)**: **Նախատեսվում է ձեռք բերել կումունալ և գյուղատնտեսական նշանակության տեխնիկա, ինչպես նաև 28 հատ) հակակարկտային կայաններ:**

10.07.2019 թվականի դրությամբ ծրագրերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել են 34 ծրագրային հայտ՝ **1316.8** մլն դրամ ընդհանուր արժեքով, որից ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիայի չափը կազմում է **695.5 մլն դրամ**, իսկ համայնքների կողմից կատարված համաֆինանսավորման չափը կազմում է **621.3 մլն.դրամ**: **34 ծրագրերից 2-ը**՝ Գյումրի համայնքի կողմից ներկայացված «Էքսկավատոր –ամբարձիչի ձեռքբերում» և Գետք համայնքի կողմից ներկայացված «Գետք համայնքի թիվ 1 փողոցի բարեկարգում և խճապատում» սուբվենցիայի ծրագրերը գտնվում են ավարտական փուլում, թվով **18 ծրագրերի** իրականացման համար հայտարարվել է մրցույթ, **իսկ 14 ծրագրերի համար** համայնքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարված մրցույթի արդյունքում շահած կազմակերպության հետ կնքել են պայմանագրեր:

11 համայնքների կողմից ներկայացված **15 ծրագրային հայտեր** դեռևս միջգերատեսչական հանձնաժողովի նիստի քննարկմանը չեն ներկայացվել: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո համայնքները պաշտոնական գրությամբ կտեղեկացվեն ծրագրերի հաստատման վերաբերյալ:

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հողօգտագործման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Զորիկ Խաչատրյան

Համաձայն մարզի հողային հաշվեկշռի, մարզի վարչական տարածքը կազմում է **268 027** հա, որն ամբողջությամբ ընդգրկված է մարզի համայնքների վարչական սահմաններում:

Ըստ 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմվող մարզի հողային հաշվեկշռի նախնական տվյալների, մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են **210876.8 հա:** Նախորդ տարվա համեմատությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի կազմը էական փոփոխությունների չի ենթարկվել: Նվազել է ընդամենը 4.93 հեկտարով, որը պայմանավորված է եղել նորակառույց Բավրայի մաքսակետի պահպանման ու սպասարկման համար նախատեսված **4.39** հա հողամասը հատուկ նշանակության հողերի կատեգորիա տեղափոխելու, իսկ մնացած 0.54 հեկտարը՝ գյուղատնտեսական արտադրական և կապի հողերի կատեգորի տեղափոխելու հետ:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի ունի հետևայալ բաշխվածությունը՝

- վարելահողեր՝ **78 143.0** հա (տեսակարար կշիռը՝ **37.0 %**),
- բազմամյա տնկարքներ՝ **59.8** հա (տեսակարար կշիռը՝ **0.02** %), որը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 12.8 հա-ով,
- խոտհարքներ՝ **9 697.7** հա (տեսակարար կշիռը՝ **4.6** %),
- արոտներ՝ **112 071.3** հա (տեսակարար կշիռը՝ **53.14** %),
- այլ հողատեսքեր՝ **10 905.1** հա (տեսակարար կշիռը՝ **5.17** %):

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են **111 920.5** հա, որի տեսակարար կշիռը գյուղյատնտեսական նշանակության հողերի կազմում՝ **53.07** % է, իսկ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը՝ **36 381.7** հա, որի տեսակարար կշիռը գյուղ. հողերի կազմում՝ **17.25 %** է, որոնք ամբողջությամբ ընդգրկված են մարզի համայնքների վարչական սահմաններում:

2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ մարզի համայնքների վարչական տարածքներում առկա համայնքային և պետական սեփականության **137 434.2** հա գյուղատնտեսական նշանակության հողերից օգտագործման է տրամադրված **49 067.6** հեկտարը (**35.7 %)՝ 306 մլն 502 հազ. դրամ** տարեկան վարձավճարով: Վարձակալության տրամադրված գյուղատնտեսական նշանակության 1 հա հողամասի միջին վարձավճարը մարզում կազմում է **6250** դրամ:

Համայնքների վարչական տարածքներում գտնվող համայնքային սեփականության **105803.4** հա գյուղատնտեսական նշանակության հողերից օգտագործման է տրամադրված **31399.5** հեկտարը (**29.6 %),** իսկ պետական սեփականության **31630.7 հա** հողերից՝ **17668.0 հա-ը (55.8 %)**:

	Հողա-տեսքը	Ըստ հողային հաշվեկշռի (հա)	Համայնքային և պետական սեփականության հողեր			Համեմատությունը 2018 թ. նկատմամբ	
			Տրամադր-ված է օգտագործ-ման (հա)	Տեսա-կարար կշիռը հողերի կազմում (%)	Տրամադր-ված չէ օգտագործ-ման (հա)	2018թ. տրամադր-ված օգտագործ-ման (հա)	Տարբերու-թյունը (-, +)
1	Վարելահող	18429.0	12776	69.3	5653	12303.7	+472.3
2	Խոտհարք	7092.1	4182.5	59.0	2909.6	4093.2	+89.3
3	Արոտ	111862.8	32072.3	28.6	79790.5	31015.7	+1056.6
Ընդամենը մարզում		137383.9	49030.8	35.7	88353.1	47412.6	+1618.2

2018 թվականի համեմատությամբ վարձակալության տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողերն ավելացել են **1618.2** հեկտարով, որի արդյունքում 2018 թվականի համեմատությամբ մարզի համայնքների բյուջեներում ամրագրված հողի վարձակալական վճարներից եկամուտներն ավելացել են **7 մլն. 396** հազ. դրամով (ավելացումը հիմնականում պայմանավորված է եղել՝ **472** հա վարելահողերի, **89.3** հա խոտհարկների և **1056.6** հա արոտների վարձակալության տրամադրմամբ): Վերջին երեք տարիներին նկավում է գյուղատնտեսական նշանակության հողերի վաձակալության տրամադրման դինամիկ աճ **(15.3 %):**

Չնայած ներկայացված թվային տվյալների դրական տեղաշարժին, պետք է խոստովանել, որ հողերի օգտագործման նշված մակարդակը դեռևս հեռու է բավարար լինելուց և խոսում է ՀՀ հողային օրենսդրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների դեռևս ոչ լիարժեք և արդյունավետ իրականացնելու մասին:

Այսպես, 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառված է **86964** գլուխ խոշոր և **76366** գլուխ մանր եղջերավոր անասուններ: Նշված գլխաքանակի արածեցման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը հաստատելու մասին» N 389-Ն որոշմամբ հաստատված նորմերի համաձայն անհրաժեշտ է առնվազն **95000**հա արոտ, այսինքն մոտավորապես այնքան, որքան արոտներ կան մարզի համայնքների վարչական տարածքներում, այսինքն նշված գլխաքանակի արածեցման համար արոտները պետք է վարձակալության տրամադրվեն ամբողջությամբ:

Մինչդեռ, մարզում առկա **111 862.8** հա արոտներից, ինչպես նշեցի վարձակալության է տրամադրված միայն **32072.3** հեկտարը **(28.6 %)**: Այսինքն արոտների հիմնական մասը մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից օգտագործվում են առանց վարձակալության պայմանագրերի և այդ հողօգտագործումից համայնքային բյուջեները եկամուներ չեն ստանում:

Համայնքների ղեկավարները մեր կողմից բազմիցս տեղեկացվել են, որ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի **«Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին»** թիվ 1477-Ն որոշմամբ պետական և համայնքային սեփականության արոտների և խոտհարքների օգտագործման տրամադրման կարգը պարզեցվել է և համայնքների ղեկավարներին հնարավորություն է տրվել համայնքային և պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու պայմանագրերը կնքել պարզ գրավոր ձևով՝ մինչև 3 տարի ժամկետով: Այսինքն, նման դեպքերում հողօգտագործման պայմանագրերի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար պահանջներ չեն ներկայացվում: Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու վճարի չափը սահմանվում է տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

ՀՀ կառավարության նշված որոշման կիրարկումն ապահովելու նպատակով մեր կողմից անհրաժեշտ մեթոդական աջակցություն է ցուցաբերվել համայնքների ղեկավարներին և տրամադրվել են նշված կարգով արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերի օրինակելի ձևերը:

Մարզի համայնքների վարչական սահմաններում առկա և օգտագործման չտրամադրված մոտ **90 հազար** հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալության տրամադրվելու դեպքում, ըստ մոտավոր հաշվարկների համայնքների բյուջեներին կարող է ապահովել շուրջ **120-130** մլն դրամ եկամուտ, որը կարող է նպատակաուղղվել համայնքերի զարգացման ծրագրերով նախատեսված տարբեր խնդիրների լուծմանը:

Սակայն այս գործում շատ համայնքների ղեկավարներ թերանում են և արդյունավետ հողօգտագործում ապահովելու և համայնքներիի բյուջեներին լրացուցիչ եկամուտներ ապահովելու ուղղությամբ գործնական քայլեր չեն ձեռնարկում:

Հարկ եմ համարում նաև նշել, որ մրցութային կարգով հողամասեր վարձակալության տրամադրելու համար հողամասերի հատակագծերը կազմելու և հողամասերի նկատմամբ համայնքի իրավունքները պետական գրանցման ենթարկելու համար համայնքների բյուջեներից կատարում են զգալի ծախսեր, նախապատրաստվում և անցկացվում են մրցույթներ, կնքվում են համապատասխան պայմանագրեր, սակայն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում այդ պայմանագրերը չեն ենթարկվում նոտարական վավերացման և վարձակալության իրավունքները չեն ներկայացվում պետական գրանցման: Արդյունքում՝ այդ պայմանագրերը համարվում են ոչ օրինական, իսկ հողօգտագործումը՝ ինքնակամ: Նման հողօգտագործումը ՀՀ օրենսդրությամբ համարվում է հողամասի օգտագործման տրամադրման կարգի խախտում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Օրենսգրքի համաձայն առաջացնում է պատասխանատվություն, ինչպես հողօգտագործողների, այնպես է պաշտոնատար անձանց նկատմամբ:

Առանձին համայնքներում համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը, այդ թվում նաև վարելահողերը, վարձակալության են տրամադրված մասնակիորեն, իսկ մնացած հողամասերի օգտագործման տրամադրման համար պարբերաբար մրցույթներ չեն կազմակերպում և

լիարժեք ու արդյունավետ հողօգտագործում ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվում:

Վարելահողերի և խոտհարքների օգտագործման տրամադրման ցածր մակարդակը առանձին համայնքներում ունի նաև որոշակի օբյեկտիվ պատճառներ: Այդ հողամասերի զգալի մասը գտնվում են մեծ թեքությունների վրա, օգտագործման ընթացքում խիստ էռոզացվել են և համապատասխան միջոցների բացակայությամբ պայմանավորված կուլտուրտեխնիկական, ագրոտեխնիկական և այլ գյուղատնտեսական միջոցառումներով հողատեսքերի որակական հատկանիշները հնարավոր չէ վերականգնել, կամ հողամասերում ընթանում են ճահճացման երևույթներ:

Համայնքների բյուջեներում այդ հողատարածքների համար նախատեսվում են հողի վարձակալական վճարներից եկամուտներ, սակայն տարիներ շարունակ այդ հողատեսքերը չեն վարձակալվում, համայնքների բյուջեներին համապատասխան եկամուտներ չեն բերում և չեն ապահովում սեփական եկամուտների կատարման առաջադրանքները:

Նման խնդիներ ունեցող համայնքների ղեկավարները մեր կողմից բազմիցս տեղեկացվել են, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 1066-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով, մարզպետի կողմից ստեղծված գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում, համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշմամբ, այդ բարձրարժեք հողատեսքերը կարող են փոփոխվել ավելի ցածրարժեք հողատեսքերի և սահմանված կարգով տրվել վարձակալության:

<u>Հողի վարձակալական վճարների հավաքագրում</u>

2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ մարզի համայնքների բյուջեներին ամրագրված **174մլն 105 հազ. դրամ** հողի և գույքի վարձակալական վճարների դիմաց փաստացի հավաքագրվել է **126 մլն 650 հազ. դրամ**, կատարման ցուցանիշը՝ **72.7 %:** Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է հավաքագրվել **2 մլն. 52 հազ. դրամ** հողի և գույքի վարձավճար կամ նախորդ տարվա փաստացի հավաքագրվածի նկատմամբ ցուցանիշը նվազել է **1.6 %**-ով:

Ընթացիկ տարվա 6 ամիսների հողի և գույքի վարձակալական վճարների պլանային ցուցանիշի նկատմամբ պակաս հավաքագրված **47 մլն 455** հազ. դրամից **12 մլն 565** հազ. դրամը առաջացրել է Գյումրի համայնքը, **13 մլն. 145** հազ. դրամը Ախուրյան համայնքը, **3 մլն. 463** հազ. դրամը Ազատն համայնքը, **3 մլն. 186** հազ. դրամը՝ Մեծ Մանթաշ համայնքը, **2 մլն. 300** հազ. դրամը՝ Սարապատ համայնքը, իսկ մնացած **22 մլն 800** հազ. դրամը մարզի մնացած 37 համայնքները:

Մարզի խոշորացված համայնքներից ընթացիկ տարվա 6 ամիսներին հողի վարձակալական վճարների հավաքագրման գծով ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ախուրյան և Սարապատ համայնքներում (համապատասխանաբար՝ 35.7 և 49.8 %), իսկ մարզի թվով 14 համայնքներ ընթացիկ տարվա 6 ամիսներին չեն ապահովել վարձակալական վճարների հավաքագրման առաջադրանքի 50%-ը (Վարդաքար՝ 12.2%, Բենիամին՝ 17.6%, Երազգավորս՝ 18.6%, Գեղանիստ՝ 18.8%, Մեծ Մանթաշ՝ 38.1 % և այլն):

Մարզի թվով 8 համայնքներ հողերի վարձակալական վճարների հավաքագրման գործում ապահովել են 100 %-ից բարձր ցուցանիշներ (Առափի՝ 127.6 %, Գետափ՝ 100.2 %, Հայրենյաց՝ 120.0 %, Հովտաշեն՝ 208.0%, Նահապետավան՝ 130.3 %, Սարալանջ՝ 116.2%, Ամասիա՝ 136.5 % և Փանիկ՝ 101.6%):

Համայնքների բյուջեների կատարման վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մարզի առանձին համայնքներում հողօգտագործման պայմանագրերով նախատեսված վարձատուի և վարձակալի իրավունքների ու պարտավորությունների կատարման հարցում կան տարբեր մոտեցումներ և ընկալումներ:

Այլապես, ինչպես բացատրել այն իրողությունը, որ աշխարհագրական նույն դիրքը, բնակլիմայական նույն պայմաններն ու բերքատվության նույն ցուցանիշներն ունեցող երկու հարևան համայնքներից մեկում հողօգտագործողները բարեխղճորեն են կատարում վարձակալի իրենց պարտավորությունները, իսկ հարևան մյուս համայնքներում՝ ոչ:

Վարձավճարների գանձումների գործընթացն ըստ համայնքների վերլուծելիս ակնառու է դառնում նաև այն փաստը, որ վարձավճարների հավաքագրման բարձր ցուցանիշներ են արձանագրվում հատկապես այն համայնքներում, որտեղ գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մակարդակը բարձր է և վարձակալության իրավունքները ենթարկված են պետական գրանցման:

Համայնքների ղեկավարների ուշադրությունը ուզում եմ հրավիրել ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված հողամասի վարձակալության մասին պայմանագրի 11-րդ կետի վրա, համաձայն որի «**Վարձակալման ընթացիկ վճարումները վարձակալի կողմից մուծվում են հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Առաջին վարձակալական վճարումները կատարվում են որպես կանխավճար, ոչ ուշ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրվա ընթացքում: Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:**

Նույն պայմանագրի 22-րդ կետի համաձայն պայմանագիրը կարող է վարձատուի կողմից միակողմանի վաղաժամկետ լուծվել, եթե՝ վարձակալը 3 ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը:

Առաջարկում եմ համայնքների ղեկավարներին, ոչ բարեխիղճ վարձակալների նկատմամբ կիրառել ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունները, վաղաժամկետ միակողմանի դադարեցնել պայմանագրերը և դրանք մրցույթով տրամադրել այլ հողօգտագործողների: